ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2025 թ.

ՔԱՂ. ՍՈՆԱ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ
ԷԼ. ՓՈՍՏ-son.chilingaryan@gmail.com

Հարգելի տիկին Չիլինգարյան,

Ի պատասխան Ձեր՝ 10.10.2025թ. թիվ 1667613 գրության, հայտնում եմ, որ 2022թ.-ի դրությամբ ՀՀ Լոռու մարզի տարածքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և ՀՀ կառավարության որոշմամբ այդպիսին ճանաչված բոլոր քաղաքացիների նկատմամբ իր ունեցած պարտականությունները պետությունը կատարել է ամբողջությամբ: Այն քաղաքացիները, ովքեր օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով դուրս են մնացել վերը նշված հերթացուցակներից և չեն ստացել որևէ փոխհատուցում, չունեն իրենց անվամբ գրանցված՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույք, իրենց հերթացուցակներում ներառվելու իրավունքը կարող են վերականգնել բացառապես դատական կարգով:

Տեղեկացնում եմ Ձեզ նաև, որ հասկանալի չէ, թէ Վանաձորի համայնքապետարանի կողմից նշված 2-րդ հերթացուցակը ինչ հերթացուցակ է, ՀՀ կառավարության որ որոշման հավելվածն է, քանզի ինչպես արդեն իսկ նշվել է, բոլոր քաղաքացիների նկատմամբ պետությունը իր ունեցած պարտավորությունները մարել է:

Տեղեկացնում եմ Ձեզ նաև, որ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տնօրինման տակ գտնվող արխիվային փաստաթղթերում Ձեր կողմից նշված քաղաքացուն վերաբերելի փաստաթղթեր չեն հայտնաբերվել: Առաջարկում եմ Ձեզ դիմել ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ պարզաբանելու համար, թէ արդյոք քաղաքաշինության կոմիտեում առկա են Ձեր վստահորդին վերաբերելի փաստաթղթեր:

Հարգանքով՝

Գլխավոր քարտուղար

Invalid signature

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.Դալլաքյան

կատ. Լ. Հախինյան
հեռ. /0322/ 2-03-91